ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

5 հուլիսի 2016 թվականի **թիվ 79** քաղ. Մոսկվա

«Տարանցման հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգում փոփոխություններ կատարելու մասին

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18–ի թիվ 289 որոշմամբ հաստատված՝ «Տարանցման հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգում փոփոխություններ կատարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հոկտեմբերի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հուլիսի 5-ի
թիվ 79 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տարանցման հայտարարագրի լրացման կարգի մասին»
հրահանգում կատարվող

1. 53-րդ վանդակի լրացման կանոնների 14-րդ կետում՝

առաջին պարբերությունը (աղյուսակից հետո) լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքների առաքման վայր են հանդիսանում լիազորված տնտեսական օպերատորի շինությունները, բաց հրապարակները եւ այլ տարածքներ» բառերով.

լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերությամբ՝

«Այն դեպքում, երբ ապրանքների առաքման վայր են հանդիսանում լիազորված տնտեսական օպերատորի շինությունները, բաց հրապարակները եւ այլ տարածքներ՝ ի հավելումն նշանակման մաքսային մարմնի ծածկագրի ու անվանման, «/» բաժանման նշանով նշվում է այն մաքսային հսկողության գոտու գրանցման համարը, որը տեղակայված է լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում եւ այլ տարածքներում եւ որը կհանդիսանա ապրանքների առաքման վայր, իսկ այն դեպքում, երբ Միության անդամ պետությունում մաքսային հսկողության գոտիները չեն հաշվառվում գրանցման համարների տրմամբ՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու մասին վկայականի համարը եւ լիազորված տնտեսական

օպերատորի այն շինությունների, բաց հրապարակների եւ այլ տարածքների փոստային հասցեն (առանց փոստային ինդեքսը նշելու), որոնք կհանդիսանան ապրանքների առաքման վայր:»:

2. «D» վանդակի լրացման կանոնների 16-րդ կետի հինգերորդ պարբերությունում (աղյուսակից հետո)՝

«բաժանիչ» բառը փոխարինել «բաժանման նշան» բառերով.

լրացնել հետեւյալ բովանդակությամբ նախադասությամբ՝ «Այն դեպքում, երբ ապրանքների առաքման վայր են հանդիսանում լիազորված տնտեսական օպերատորի շինությունները, բաց հրապարակները եւ այլ տարածքներ, ի հավելումն նշանակման մաքսային մարմնի ծածկագրի, անվանման եւ գտնվելու վայրի, «/» բաժանման նշանով նշվում է այն մաքսային հսկողության գոտու գրանցման համարը, որը տեղակայված է լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում եւ այլ տարածքներում եւ որը կհանդիսանա ապրանքների առաքման վայր, իսկ այն դեպքում, երբ Միության անդամ պետությունում մաքսային հսկողության գոտիները չեն հաշվառվում գրանցման համարների տրմամբ՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու մասին վկայականի համարը եւ լիազորված տնտեսական օպերատորի այն շինությունների, բաց հրապարակների եւ այլ տարածքների փոստային հասցեն (առանց փոստային ինդեքսը նշելու), որոնք կհանդիսանան ապրանքների առաքման վայր:»: